

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ԱՊՐԻԼ 5

ԹԻԻ 3816

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 5 ԱՊՐԻԼ

ԱՂԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Վերջին ժամանակներս շատ քիչ առիթ ունեցած ենք Միացեալ Ընկերութեանց վերայ խօսելու: Պատճառն այն է որ Հայոց կրթական այդ կարեւոր հաստատութիւն՝ օր աւուր ամրապնդուելով ու բարւոյր ուղղութիւն մը տալով իւր գործոց, գիտցած է իւր օգտակարութիւնն ըմբռնել տալ քաղաքացւոյն եւ գիւղացւոյն հաւասարապէս, ու կը գործէ այժմուի մենջիկ: Այն ազգայինն որ փոքր ի շատէ գումար մը յատկացուցած է այդ նպատակին, պէտք չունի այլ եւս հրապարակային հրաւերի կամ քաջալերանաց: Գործն ինքնին կը խօսի. եւ շատ աղմուկ յաճախ աւելի խափանարար կը լինի քան օգտակար:

Իրաւ է թէ երկը Ընկերութեանց միացման առաջին օրերուն մէջ, ազգային լրագրաց էջերը կը գրաւուէին թեր ու դէմ կարծիքներով, գովաբանութիւններով, ընդնադատութիւններով որք կ'արտայայտուէին ամեն կողմէ, երբեմն իսկ բուռն կերպիւ: Միութիւնն ալ ունեցաւ իւր «երիտասարդութիւնն», էթէ կարելի է այսպէս ըսել, բայց հետզհետէ մարեցան կրքերն եւ ժամանակին ու պարագայից բերմամբ, ի մի ձուլուեցան Երեսփոխանութեան մէջ զանազան կարծիքներ ներկայացնող բաժանումներն: Իւրաքանչիւր կուսակցութիւն իւր կարգին գործոց գլուխ անցնելով, ըմ-

բռնեց այն բազմադիմի դժուարութիւններ որոց կը հանդիպի վարչութիւնն զոր սակայն հեշտ էր քննադատել: Կեդրոնական ժողովոյ նիստերն, որք երբեմն յուզմանց եւ միջադէպերու առիթ կ'ընծայէին, այժմ այնքան կանոնաւոր եւ գործնական կը լինին որքան սակաւաթիւ: Ընկերութեան Երեսփոխանը տարին մէկ քանի անգամներ կը գումարին համար ստանալու, Եւրամացոյց քուէարկելու, օրինական ծրագրեր քննելու եւ կամ ինչ ինչ ձեւակերպութիւններ կատարելու համար: Պետի դրութիւնը մէկ կողմ թողուելէն յետոյ, Յովակիմեան Գառնիկ էֆէնտիի ատենապետութեամբ եւ ուղղակի կեդրոնէն ընտրեալ Տնօրէն ժողով մը կը պաշտօնավարէ բաւական ժամանակէ հետէ եւ գոհացուցիչ է տեսնել որ կանոնաւոր համարատուութիւն մը հրատարակեց այս օրերս: Կ'արժէ քանի մը տող գրել այդ Տեղեկագրոյն վրայ, յորում ըստ բաւականին յստակ կերպիւ պարզուած են Ընկերութեան արդի ուղղութիւնը, գործերն եւ վիճակը:

Այդ Տեղեկագրէն կ'երեւի թէ, Միացեալ Ընկերութեան երկսեւ վարժարանաց թիւն է այժմ 31, յորս կը դաստիարակուին 1,983 աշակերտք եւ 447 աշակերտուհիք: Վարժարանաց 25ն Հայաստանի մէջ են եւ 6ը Կիլիկիոյ մէջ: Այդ վարժարաններէն ետլած են ցարդ 150 ուսումնաւարտք որոց ցն աշակերտուհիք՝ Ազգ.-Հայուհեաց Ընկերութեան ծախիւք բացուած վարժարաններէն: Այս ուսումնաւարտից ամէնքն «ալ գործի մէջ են այսօր. ոմանք կառաւ «վարական պաշտօններու մտած են, ոմանք «ուսուցչութեամբ կը պարապին եւ ոմանք «ալ, հարուստի զաւակները, առեւտրով

« Կ'ըբաղին : Անոնցմէ կան իսկ ոմանք որք
 « Մայրաքաղաքիս մէջ հաստատուած՝ առեւ-
 « տրական կարեւոր գործեր կը կատարեն
 « կանխահաս յաջողակութեամբ մը : Կան
 « մի քանիներ ալ որք Մայրաքաղաքիս կայ-
 « սերական վարժարանաց բարձրագոյն ուս-
 « մանց կը հետեւին : Ուսումնաւարտք տա-
 « րածուած են ամենուրեք ի Հայաստան եւ
 « դարմանալի չէ Հայաստանի յետին գիւ-
 « ղին մէջ տեսնել երբեմն վարժարան մը
 « որ կը կառավարուի մեր սաներէն միոյն
 « ձեռամբ : »

Այս տեղեկութիւններ կարեւոր են եւ
 որքան աւելի յաճախ եւ մանրամասնու-
 թեամբ հրատարակուին, այնքան աւելի կը
 նպաստեն Ընկերութեան գոյութիւնն ա-
 պահովելու եւ հիմունքն ամրապնդելու,
 վասն զի ձեռք բերուած արդիւնք մը ցոյց
 տալը գեր ի վեր է ամեն գովեստէ եւ ժո-
 ղովորդեան ուղղեալ ամեն հրաւերներէ : Փա-
 փաքելի էր միայն որ Ընկերութեան երես-
 փոխանաց հաղորդուէր նաեւ անուանքն
 այդ ուսումնաւարտից, կամ գէթ անոնց ո՛ր
 վարժարաններէն ելած լինէին, որ կարեւոր
 պարագայ մ'է :

Տեղեկագիրը կը պարունակէ հաստատեց
 եւ ծախուց երկու գլուխներ յորս ամփոփ-
 ուած են Ընկերութեան եկամուտի գլխա-
 ւոր աղբիւրներն, անոնց առաւելութիւնն
 կամ նուազումն՝ անցելոյն բաղդատմամբ,
 ինչպէս նաեւ ծախուց բաժանումն եւ գոր-
 ծադրուած գլխաւոր խնայողութիւնները :

Առաջին գլխոյն մէջ խորին ուշադրու-
 թեան արժանի են սա տողեր. « Գալով Ռու-
 « սահայոց, ցաւ ի սիրտ կը յայտնենք թէ
 « ամեն յարաբերութիւն դադրեցուցած
 « են մեր հետ, եւ ո՛չ իսկ լուսնայ մը նուէր
 « եկած է մեզ Ռուսաստանէն տարիներէ
 « հետէ » : Արդարեւ, որքան ալ որ Ընկե-
 րութիւնը Ռուսահայոց նպաստներէն զրկը-
 ուելովը, դադրած չէ ապրելէ կամ քայ-
 քայլումը չէ կրած բարեբաղդաբար, շնոր-
 հիւ կեդրոնին մէջ կրկնապատկուած ոյժե-
 րուն եւ գաւառաց մէջ հետզհետէ տիրող
 ինքնօգնութեան, անուրանալի է սակայն
 թէ Ռուսահայոց արդի չէզոքութիւնը — զոր
 Տեղեկագիրն անտարբերութիւն կ'անուա-
 նէ — բարոյական եւ նիւթական զգալի
 պակաս մը կը թողու :

Բայց այս պարզ յիշատակութիւնն եւ Ա-
 մենայն Հայոց նորընտիր Հայրապատին վը-
 րայ դրուած յոյսը բաւական չեն, կար-
 ծենք, այդ պակասը լեցնելու : Ընկերու-
 թեան պարտքն է որոնել, քննել թէ ի՞նչ
 պատճառներէ ծագում առած է այն ցըր-
 տութիւն որ կը տիրէ այժմ Ռուսահայոց եւ
 Թրքահայոց միջեւ, ի մասին Հայաստանի
 և Արիւկիոյ կրթական գործին : Ի՞նչ պատ-
 ճառ կայ, որ Միութիւնը նոր կազմուած և
 տակաւին ոչ այնքան ծանօթ, կը վայելէր
 Ռուսահայոց համակրանքն ու լիաբուռն
 կ'ընդունէր այն նպաստներ որք յատկաց-
 ուած էին նախկին Ընկերութեանց, եւ ահա
 ժամանակն անցնելով եւ Միութիւնը զօրա-
 նալով, տակաւ առ տակաւ տկարացան,
 անհետացան այդ նպաստներ : Ձենք կրնար
 ուրանալ թէ հոգեւոյս Գէորգ Գ. Կաթողիկոս
 չզլացաւ բնաւ իւր բարձր հովանին, զրկե-
 լով Կոնդակ Օրհնութեան և սիրայօժար ըն-
 դունելով Ընկերութեան կողմէ եղած այն ա-
 ռաջարկներն որք ուղղակի էջմիածնայ Սինոդի
 իրաւասութեան կը պատկանէին. եւ սա-
 կայն գլխաւոր զսպանակը մամուլն էր՝ Տըփ-
 ղիսի հայ թերթերն, որք գիտցան արծար-
 ծել ժողովրդեան սէրն եւ գրգիռ ազդել
 գէպ ի Միացեալ Ընկերութիւնն :

Այդ թերթեր լռութիւն կը պահեն այ-
 ժմ. եւ պէտք է խոստովանիլ թէ Ամենայն
 Հայոց Հայրապետին սիրայօժարութեան
 չափ, եթէ ոչ աւելի, կրնայ զօրաւոր լինիլ
 Տփղիսի հայ թերթերուն սիրայօժարու-
 թիւնն որ գիտնայ վառել դարձեալ Ռու-
 սահայոց սիրտը, եւ անհետացնել անոնց
 անտարբերութիւնն :

Ձենք ուզեր աւելի ծանրանալ այս կէ-
 տերու վրայ, ինչպէս նաեւ մանրամասնա-
 բար թուել Տեղեկագրոյն այն մասեր յորս
 ծանուցուած են այս կամ այն գաւառաց
 մէջ վարժարանաց բացման կամ փակման
 վերաբերեալ կարգադրութիւնք, տեսչական
 արդի դրութիւնն եւ նորա օգտակար կող-
 մերը, ծախուց խնայողութիւնները, եւ :

Յաւարտ այս ծանօթութեանց, կը գըտ-
 նենք հակիրճ տեսութիւն մը Ընկերութեան
 արդեանց եւ ուղղութեանը վրայ : Ընկե-
 րութիւնն իրաւամբ գոհ է որ այսօր Հա-
 յաստանի յետին գիւղը կը մխրթարուի իւր
 անունը լսելով եւ փափագ կը յայտնէ նը-

պատմ մ'ալ ինք հասցունել. դո՛ւ է որ ինք-նօգնութեան գաղափարը կը տարածուի հետզհետէ ժողովրդեան ամեն դասակարգերու մէջ, սկզբունք մը որ դաստիարակութեան ծաւալման աստիճան կարեւորութիւն ունի մեղ համար, եւ մի օր խթան պիտի լինի որ հայ գիւղացին ինք իւր ձեռք կանգնէ ու պահէ իւր նախակրթարանն, եւ կեդրոնը մի միայն զայն հովանաւորելու պաշտօն ունենայ:

Դ Ա Տ Ա Կ Ա Ն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔՍՐՈՁԶՈՅ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ

Պատ. Տր. Հուայթ. — Քննութիւն. — Բըռնաբարելոյն պատմութիւնը. — Վ. Կան. — Անկարող դատարան. — Երեւելին պատուելի Պրիսթոր. — Բռնաբարեալն Տոֆլըս. — «Տաթ'ս օլ Լայթ». — Նոր եկեղեցի:

Երբ հասարակ ժողովրդէն ոմանք օրինաց, բարոյականի կամ քրիստոնէութեան դէմ մեղանշեն՝ չեն գրաւեր այնչափ ուշադրութիւն որչափ ժողովուրդն բարոյականի ու քրիստոնէութեան առաջնորդող անձինք, որոց ազդեցութիւն մեծ կը լինի ընդհանրապէս:

Անցեալներն խոստացեր էի արդէն առաջին նամակաւ մը գրել պատուելի Պրիսթորի վրայ. այսօր նոյն խոստումս կատարելէ զատ ուրիշ նմանօրինակ դէպք մ'ալ ունիմ ներկայացնել որ իւր հետաքրքրութեամբ կը յուսամ հաճութեամբ պիտի կարդացուի:

Ներկայ ամսոյս (փետր.) տասներորդ օրը Հուայթ Փլէնսի բարձրագոյն ատենին առջեւ կը դատուէր պատուելի Րօպէրթ Ֆ. Հուայթ, եղեռնական յանցանքի մը համար, ի ներկայութեան շատ մը տիկիներու հետաքրքրել բաղմութեան մը: Ունկնդրաց մէջ կ'երեւէին քսան եւ հինգ Ֆլօֆֆսք քարոզիչներ, որք դատեր էին իրենց ամբաստանեալ եղբայրը Նիւ - Եորքի մի եկեղեցւոյն մէջ. սակայն սորա մի վերջնական որոշման չի կրնալ յանգեւուն համար՝ ապրիլի մէկին մի ուրիշ ժողով պիտի կազմուի այս

առթիւ նոյն քաղաքի սուրբ Յովհան եկեղեցւոյն մէջ:

Պատուելի Հուայթի քննութիւնն չ'սկըսած, դատարան մտած է Յիլմոնթի (Գոլումպիա) մէթոտիսդ մի եկեղեցւոյ քարոզիչն պատուելի Կօսըս անուամբ իւր տիկնոջ ու նորա քրոջ՝ օրիորդ Էլֆրիտա Րօպինսընի հետ, որ ամբաստանելոյն դէմ դատ բացող անձն է, գեղեցիկ դէմքով ու միջակ հասակաւ, իբր քսան երեք տարեկան, եւ որ բռնութեամբ լկուած էր մէկ ու կէս տարի առաջ յիշեալ քարոզչէն եւ ունեցած էր մի զաւակ Ալպընի Սիթի հիւանդանոցին մէջ:

Կատաստանն սկսած է ժամը տասնին ու Էլֆրիտա Րօպինսըն այսպէս սկսած է իւր պատմութիւն զոր լրագրէ մը թարգմանելով ի մէջ կը բերեմ. «Քսան եւ երեք տարի առաջ Լօհարի Գընթիի Գարլոթվիլ քաղաքին մէջ ծնած եմ ես: Իմ մայրս մեռաւ երբ վեց տարեկան էի, իսկ հայրս հինգ տարի առաջ: Մօրքորոյս հետ կը բռնակէի եւ կը սորվէի կանանց հանդերձներ կարել, եւ յետոյ գնացի յՕգ Հիլ՝ ընդայրս պատուելի Կօսըսի քով, բայց հիմա կ'ապրիմ նորա հետ ի Յիլմոնթ: Երեք տարի առաջ Կրինվիլի մէջ, առաջին անգամ գողով, հանդիպեցայ Պ. Հուայթի որ կը քարոզէր այն ատեն նոյն քաղաքի մի եկեղեցւոյն մէջ, եւ ծառայեցի իւր ընտանեաց մէջ չորս շաբաթի չափ: 1884 մայիսի 28ին յիշեալ պատուելի տունն այցելեցի ի Բիւրաի Սթէյշըն. սորա տիկինն ու իմ քոյրս դըպրոցական բարեկամուհիներ էին. տիկին Հուայթ փափուկ վիճակ մը ունէր: Սորա (Հուայթը) գրեցին այն ատեն պատուելի Կօսըսի թէ ես չեմ ուզեր վերադառնալ իրենց: Եւ մնացի պատուելի տունն ութն շաբաթներ մինչեւ որ տիկին Հուայթ ծնաւ մի մանկիկ: Կարծեմ յունիսի 11ի երեկոյին ժամ 7-8 ի ատեններն երբ ճաշարան նըստած կը կարդայի, Պ. Հուայթ ներս մտաւ, ոչ ոք չ'կար մեր քով: Իմ աթոռս դրուած էր պատուհանին առջեւ ուսկից կրնայի փողոցը դիտել: Հովիւը իւր աթոռն ինձ մօտեցուց ու համբուրեց երեսս փորձելով դիս գրկել: Ես քիչ մը հեռացայ եւ նա հետեւեցաւ ինձ ունենալով անվայել համարձակութիւն. ալ կռուիլ սկսեցինք, դիմադրեցի

որչափ որ կրնայի եւ վերջապէս երկուքս մէկէն գետին փռուեցանք . եւ նա : Յետոյ պատուելին իւր գլխարկն առնելով դուրս ելաւ . ի սկզբան ոչ մի բան չըսի մէկու մը : Երբ իրեն տունը թողուցի , գընացի քրոջս քով : Ապա ուղեւորեցայ Ալալընի Սիթի հիւանդանոցն ուր ծնայ զաւակ մը 85 մարտի 11 ին :

Սոյն պատմութենէն յետոյ հարցուեր է բռնաբարելոյն թէ « Ո՞վ հոգաց քու ծախքերդ հիւանդանոցին մէջ » :

— Բօպէրթ Թ. Հուայթ , պատասխանած է Էլֆրիտա : Ես հիւանդանոց գնացեր էի դեկտ. 29 ին . Պ. Հուայթ նոյն ամսոյ 22ին եկաւ պատուելի Կօսըսի տունն (ուր կը գտնուէի նոյն ատեն) երկու նշանաւոր անձերու հետ : Ես խոհանոցն էի եւ երբ Հուայթ ինձ եկաւ ու ձեռքը երկնցուց , մերժեցի զայն . — Շատ լաւ պիտի լինի , ես քո բարեկամն եմ , ըսաւ ինձ : Ես չ'ընդունեցի եւ քիչ յետոյ ամէն բան պատմեցի քրոջս ու իւր էրկան : Քեռայրս սոյն խընդիրն իմանալով պատուելի Հուայթի եւ իմ քրոջս հետ մէկտեղ տան վերի յարկերն դընացին : քիչ յետոյ երբ ես վեր ելայ տեսայ որ Հուայթ սենեկին մէջ կը ձեմէր ու կ'ըսէր . « Այո , ես ամէն հոգ պիտի տանիմ աղոր համար : »

Նոյն օր այսպիսի հարցեր ու պատասխաններ լսելէ յետոյ դատարանը կը փակուի ու կը գումարի ուրիշ օր մ' ալ , կարծեմ փտվր. 12 ին , ուր նորէն բազմութիւն մը խռնած կը լինի . շատ երկարած կ'ըլլամ եւ թէ մանրամասնութեանց դիմեմ , այլ բաւ կը համարիմ թարգմանել նոյն օրուայ հարցաքննութենէն մի կտոր :

— Դու ե՞րբ գիտցար , հարցուեցաւ պատ. Կօսըսի , թէ Էլֆրիտա բռնաբարուած է Հուայթէ :

— Էլֆրիտա Բօպինսըն , ես եւ տիկինս դեկտ. 16 ին Ալալընի գնացինք , պատասխաներ է պատ. Կօսըս , երկու անձանց հետ խորհրդակցելու համար . հոն քիչ շատ գաղափար տուի խնդրոյն վրայ եւ գրեցի պատ. Հուայթի առաջին անգամ . նոյն ամսոյ 22ին Հուայթ Թիլմոնթ եկաւ , ու երբ առաջին անգամ զիս տեսաւ , ձեռքս թոթուեց ու սկսեցինք խօսակցիլ : Հոն իրեն իրեն խնացուցի թէ « Էլֆրիտայի տակաւին

չի ծնած զաւակին հայրը դուք էք : » Այս միջոցիս պատասխանեց ինձ Հուայթ թէ « Հարկ չի կայ զայդ ուրանալ , կը խոստովանիմ յանցանքս : Այսօր հոս եկած եմ բարերարել Էլֆրիտան որչափ որ կրնամ : Ըսել կ'ուզեմ նաեւ թէ ես բաւական պատիւ ունիմ հասարակութեան մէջ » :

Պատ. Կօսըս երկար պատմութիւն մ'ընելէ վերջ ծանուցած է նաեւ թէ ամբաստանեալն 300 տոլարէ աւելի դրամ տուած է իրեն . Էլֆրիտայի ծախք ընելու համար : Պատ. Հուայթ ըսած է եղեր նաեւ պատ. Կօսըսի թէ « Այս դէպք մեծ դաս մը եղաւ ինձ : Մէկ վայրկեանի հաճոյքը մեծ ցաւերու պատճառ եղաւ եւ եւ » : Ալ ընթերցողին կը մնայ երեւակայել մնացեալն :

Այսպիսի երկար հարցաքննութիւններէ յետոյ երեւան ելած են նաեւ տասն և ութը նամակներ այս խնդրոյն վերաբերեալ . սակայն նամակաց մէջ բացորոշ բան մը գըտնուած չը լինելուն համար , բան մը չէ կըրցած ապացուցուիլ , թէ եւ վեր ի վերոյ Էլֆրիտայի դործը շօշափող նախադասութիւններ կան եղեր դոցա մէջ :

Վերջապէս այս երկրորդ նիստն ալ բաւական չի լինիր վճիռ մ'արձակելու համար . երրորդ եւ չորրորդ անգամներն ալ ապարդիւն կը լինին . զի պատ. Հուայթ կ'ուրանայ եղեր իւր յանցանքն ու տուած 300 տոլարներն « իբր գթութիւն շնորհած եմ » կ'ըսէ եղեր , եւ ասկէ զատ դատաւորք վըկայից խօսքերուն մէջ հակասական բաներ տեսած են ու Էլֆրիտայի բռնաբարման ապացոյց մը չեն կրցած գտնել . զի կ'ըսէ եղեր ամբաստանելոյն փաստաբանն թէ « Էլֆրիտա ինչո՞ւ օգնութիւն չէ պուտցեր այդ բռնաբարման միջոցին : »

Ապացուցեալ ճշմարտութիւն մ'է այժմ ժողովրդեան համար թէ Պատ. Հուայթ Էլֆրիտայի նորածնոյն ապօրէն հայրն է , սակայն խնդիր է ապացուցանել գործին բռնի լինիլն . եթէ այս չ'ապացուցուի , Հուայթ պիտի ազատի կ'ըսեն . մեծ տուգանք մը վճարելէ . վասն զի Էլֆրիտա չի գիտնալով իւր պատուոյ յարգն , իւր հաճութեամբ յանձնած է ինքզինքն պատուելին կրից :

Վերջապէս անցեալ ուրբաթ վերջի նիստը կ'ընէր Հուայթ Փլէյնի բարձրագոյն ատենան , ուր բաւական մանրամասն հար-

ցաքննութիւններ լինելէ վերջ դատաւորք կը մտնէին խորհրդակցութեան սենեակն վճիռ մը տալու համար Հուլայթի ի գործ դրած բռնաբարման առթիւ . շատ երկար տեւած է խորհրդակցութիւնը . նոյն օր չէ վերջացած . ուրբաթ գիշեր ալ խորհրդակցելէ վերջ երէկ առաւօտ դատաւորք արձակած են իրենց վճիռն : Սակայն մի՛ յուսաբ, ընթերցողք, լսել մի գոհացուցիչ պատիժ Հուլայթի համար : Գիտէք ի՞նչ վճռած են . . . ոչինչ : Զի սոքա չեն կրցած համաձայնիլ իրարու հետ , և բնականաբար խընդիրն պիտի ներկայանայ ուրիշ ձեռնհաս մի ատենի :

Այս այսչափ : Պատմենք պատ . Պրիսթորի խնդիրն :

Պատ . Զործ Բ . Պրիսթոր Սփրիկ Վալէի մէթոտիսդ եկեղեցւոյ քարոզիչն է , որ մեծ պատիւ ունի այդ կողմեր եւ որոյ քարոզներն երեւելի ըրած են զինքն ժողովրդեան առջեւ . իսկ իւր ժողովուրդն յանջափա կը սիրէ եղեր զՊրիսթոր , որուն անուն միայն պատկառ կ'աղդէ եղեր մեծին ու պղծտիկին :

Սոյն պատուելի անձին խնդիրն՝ հրապարակ ելնելէ քանի մը շաբաթ վերջը , տեսայ «Թրուէն Էթլը» ի մէջ , զի ի սկզբան ուշադրութիւն իսկ չէի ըներ երբ կը տեսնէի լրագրաց մէջ այս առթիւ երկար յօդուածներ , որոց համար անկարեւոր բաներ եղած լինիլ կը կարծէի : Բայց սակայն երբ յիշեալ թերթն ըսաւ սոյն բռնաբարման կարեւորութիւնն , սկսայ ուշադիր լինիլ խնդրոյն կատարեալ պատմութիւնն իմանալու համար . կը ցաւիմ ըսել որ կարգ մը մանրամասնութիւններ անծանօթ մնացին ինձ , թէեւ գործին վրայ դադարար մը կրցած չեմ կազմել :

Տոբթըր Պրիսթոր իւր տան ու աղախնոյն գործերը թեթեւցնելու համար Պրուքլինի մի որբանոցէն կը խնդրէ սպասուհի մը , եւ յիշեալ հաստատութեան վարչութիւնը ուրախութեամբ կը զրկէ պատուելոյն Իտա Տոմլըս անունով գեղեցկադէմ մի աղջիկ տասն եւ հինգ տարեկան , կարծելով որ անտէր որբին համար մի լաւագոյն տեղ կրցած էր գտնել : Եւ արդարեւ իրաւունք ունէր յիշեալ վարչութիւնն այսպէս խորհելու , զի Պրիսթորի ա-

նունն ու պատիւը ծանօթ էր իրեն :

Իտա Տոմլըս բաւական ատեն կը ծառայէ քարոզչի տան մէջ , ու շատ կը պատկառի եղեր մեծանուն քարոզչէն , որոյ առջեւ ելած ատեն այնչափ կը կարմրի և այնչափ կը դողայ եղեր որ տեսնող մը իրաւամբ կրնար կարծել , կ'ըսեն , թէ աղջիկը իբր սուրբ կը պաշտէ զհովիւն ու կ'երկնչի անկէ : Սակայն մեր Պրիսթորը դժոխային խորհուրդներ կ'սկսի յղանալ իւր մտքին մէջ : Օր մը Յարգելի Հայրը կը շոյէ աղջկան երեսը . Տոմլըս մանուկ չլինելով՝ կը հասկնայ թէեւ շոյելու նշանակութիւնն , բայց այսու հանդերձ հայրական գգուանք մը լինիլ կը կարծէ զայդ : Ուրիշ օր մը քարոզիչը կը գրկէ իւր սպասուհին . Իտա մեղաւոր բան մը չի կարծեր զայդ գգուանք . օր մ'ալ հովիւը կը համբուրէ զաղջիկն եւ սա « հայրական անկեղծ համբոյր մ'է » կ'ըսէ ինքնիրեն , սակայն քարոզչի մեղաւոր պրկուեցնեն ուրիշ նպատակաւ կը հպին եղեր աղջկան թարմ երեսներուն : Վերջապէս օր մ'ալ քարոզիչը կ'իմացնէ Տոմլըսի իւր դժոխային խորհուրդն : Իտա չի կրնար ընդդիմանալ ու անձնատուր կը լինի : Թրուէն Էթլը կ'ըսէ թէ Իտա ըսած է եղեր այդ միջոցին քարոզչին թէ — Հայր , Աստուած չը՞ տեսներ : — Այո՛ , պատասխանած է հովիւն , սակայն բաւական է որ մարդիկ չը տեսնեն , Իտա :

Իտա իւր պատիւն տալէ վերջ կը պատմէ եղելութիւնն տան մեծ աղախնոյն՝ տիկին Հաննա Սլէյդըրի . եւ յետոյ կը փախի քարոզչի տունէն ու կ'երթայ ի Պրուքլին : Շատ օրեր չանցած խնդիրն երեւան կ'իկնէ ու Պրուքլինի որբանոցի վարչութիւնն կը խառնուի գործին իբր պաշտպան Տոմլըսի : Սոյն վայրենի անձն դատարանաց առջեւ դատուելէ առաջ Նիւ-Եորքի մէջ մէթոտիսդ քարոզիչներէ բաղկացեալ ժողով մը կը գումարուի , դատելով զՊրիսթոր , յանցաւոր կը գտնէ զայն , զրկելով զինքն իւր պաշտօնէն . և յետոյ խնդիրն կուգայ ըՍփրիկ Վալէի բարձրագոյն ատենին , որոյ մի մի քանի անդամներն կը վերաբերին Պրիսթորի եկեղեցւոյն :

Դատաստանը բաւական երկար տեւեց եւ տակաւին վերջնական որոշման մը չի յանգեցաւ : Իտա Տոմլըս , կ'ըսեն լրագիրք ,

քաջութեամբ կը բողոքէ մինչ ցարդ իւր երբեմն պաշտած անձին դէմ, ու իւր պատմութիւնն ամէն անգամ կը պատմէ աներկիւղ դատարանաց տոջեւ:

Պրիսթոր կրօնական ժողովէն իբր յանցաւոր նկատուած օրէն զրկուած էր իւր եկեղեցւոյն մէջ քարոզելու պաշտօնէն. սակայն իրեն համակրող շատ մը անձեր բանի տեղ չը դնելով իւր յանցանքն ու քարոզչաց վճիռն, անցեալները կաղմեցին մի նոր տեսակ եկեղեցի, եւ Պրիսթոր քանի մը շաբաթ առաջ սկսեց քարոզել իւր նոր ժոժովդեան:

Ալ տեսներ ինչ պիտի լինի սոյն խընդրոյ վերջաւորութիւնն, որ արդարեւ արատ մ'է ամերիկեան քարոզիչներու խմբին:

Հ. ԷԿԵՆՅԱՆ

ձեռք Սեթի, 21 փետր.

ՆՈՐԱՎԷՄ

ՊԱՐՈՆ ՇԻՐԹԻ ԳԼԱՌԻՆԵՐԸ

Երբ Մըլէօնի նախնական դպրոցին հինգերորդ կարգը աւարտելու վրայ էի, Մօռիսէ, Նօրման եւ ես, զոր դպրոցին մէջ երեք անբաժանելիները կ'անուանէին, միտքերնիս դրինք երաժշտութիւն սորվիլ:

Մտողներուս արտօնութիւն առինք, բայց դպրոցին տնօրէնը ըսաւ մեզ թէ, քաղքին մէջ երաժշտութեան դասատու մը գտնելը դիւրին բան չէր. բարեբաղդաբար կը սըլալէր, վասն զի քիչ ատենէն մեզ ծանոյց թէ տաղանդաւոր եւ մեծ արժանեաց տէր դասատու մը գտած էր որու պիտի ներկայացնէր մեզ ի մօտոյ:

Ի՞նչ մեծ եղաւ վեր ուրախութիւնն երբ մեր տնօրէնը զմեզ անոր գրասենեակը մտցնելով ըսաւ.

— Պարոն Շիրժ, պատիւ ունիմ ձեզ ներկայացնել ձեր նոր աշակերտները:

Պարոն Շիրժ վաթսուներոց մարդ մ'էր, միջահասակ, որուն իրանը կարի գէր եւ սրունքները կարճ էին. գլուխը, խոշոր եւ քիչ մը ուսերուն մէջ մտած, ծածկուած էր

դեղնագոյն մազերով որք քունքերուն միակած էին: Իւր կարմիր եւ ուռուցեալ այտերն որք սակայն մեծ խնամով ածիլուած էին, խեղդելու չափ կը սեղմէին կաս կարմիր ամեհի քիթ մը որուն վրայ հազար եւ մէկ կապտագոյն երակներ կը նշմարուէին: Այս քիթը, ճշմարիտ հրաշակերտ այլանդակութեան, թանձր ու մսոտ շրթանց վրայ կ'իյնար: Եւ սակայն մանր ու բացկապոյտ աչեր իւր դէմքին ուշիմ արտայայտութիւն մը կուտային:

Բովանդակ իւր անձը ծաղրաշարժ եւ այլանդակ կերպարանք մ'ունէր իւր գծուծ զգեստներուն մէջ:

Երկայն ու վերէն վար կոճկուած լոգիկ մը հագած էր որ ժամանակաւ չագանակագոյն, այժմ ինչ գոյն ըլլալը դժուար էր գտնել. իւր կաղնեգոյն տաքատին տակէն մարդ կարծես կը գուշակէր տեսնել իւր բարակ ու նիհար սրունքները. այս տաքատին տակէն, որ խիստ լայն եւ խիստ կարճ էր, կը տեսնուէին կապոյտ գուլպաներ եւ հաստ կօշիկներ որոց տակ երեք կարգ երկաթէ գամեր գամուած կային:

Մեր տնօրէնին առջեւ ոտքի կեցած էր այնպիսի դրից մէջ որ տեսնողը կը կարծէր թէ պարելու կը պատրաստուէր: Իւր ձեռաց մէջ անդադար կը դարձնէր հին ու եղոտ գլխարկ մը, սաստիկ վրդովեալ կերպարանքով որպէս դատապարտեալ մը իւր դատաւորաց առջեւ:

— Ահաւասիկ ձեր նոր աշակերտները, կրկնեց տնօրէնը:

Դասատուն խոնարհեցաւ այնպիսի ծաղրաշարժ կերպով մը որ քիչ մնաց իրեն ըթին քահ քահ մը բրցնէինք:

— Պարոններ, ըսաւ տնօրէնը մեզ դառնալով, պարոն Շիրժ զոր ձեզ կը ներկայացնեմ, մեծատաղանդ երաժիշտ մ'է եւ միանգամայն մեծահամբաւ սրնգահար մը:

Ի՞նչպէս սրնգահար, ի՞նչ, միթէ մենք սրինգ նուագել պիտի սորվէինք: Ասոր վերայ խնդալնիս չկրցինք բռնել, եւ սողոց յատուկ, սուր, ծաղրալից եւ անպատշաճ քրքիջներ զոր մինչեւ այն ատեն կարող եղած էինք զսպել, գրասենեակը թնդացուցին:

Յայնժամ խեղճ դասատուն իւր խոշոր եւ կարմրած գլուխը դէպի մեզ դարձուց

այնպիսի սրտաճմիրիկ դէմքով մը որ՝ ակամայ դադրեցանք ծիծաղելէ իւր արդարացումը մտիկ ընելու համար։ Բայց տնօրէնը սկսաւ խօսիլ։

Մեր անամօթութիւնը յանդիմանելէ յետոյ դէպի ծերունին դարձաւ եւ ըսաւ։

— Ներողամիտ եղի՞ք, պարոն, այս տղայը չատ անկիրթ են։

Արցունքի կայլակ մը փայլեցաւ Պ. Շիւրճի աչաց մէջ։ Եւ այնչափ խոնարհ ու վրդովեալ կերպարանք մ'ունէր որ վայրկեան մը կարծեցինք թէ ինքն մեզմէ ներութիւն պիտի խնդրէր։

— Պարոնայք, ըսաւ յուզեալ ու դողդոջուն ձայնիւ մը, հիմնական կերպով պիտի սորվեցնեմ ձեզ երաժշտութիւնը, իմ քլաւինէթս ձեզ մնաս մը չունի։ — Եւ շարունակեց աչերը խոնարհեցնելով իբր յանցաւոր մը — եթէ կը հաճիք այս նուագարանը իբր պատրուակ թող ծառայէ մեզ։

Մեր անքաղաքավարութեան հակառակ կարծրասիրտ չէինք։ մեր դասատուին այդչափ մեծ ներողամտութեան առջեւ ի գութ շարժեցանք, վասն զի թէ եւ այլանդակ կերպարանք մ'ունէր, բայց վերջապէս ամէն յարգանաց արժանի էր, ուստի խօսք մէկ ըրինք կրցածնուս չափ ուշադիր ըլլալու իւր դասախօսութեանց։

— Սիրելի պզտի բարեկամներս, որչափ բարեսիրտ, որչափ ազնիւ եւ որչափ սիրուն էք, յաւելցուց, հաստ կտաւէ դոյն զգոյն խոշոր թաշկինակով մը իւր աչերը սրբելով։

Գրասենեակէն դուս ելանք եւ գացինք մեր ընկերները դտնելու որք դրօսանքի էին։ Պատկառելի սպարոն Շիւրճի ներկայութեան զգացած խռովութիւննիս չուտով փարատեցաւ եւ խեղկատակութիւնը նորէն սկսան, նամանաւանդ երբ դասատուին քլաւինէթը միտքերնիս ինկաւ։

— Վա՛նկ, վա՛նկ, վա՛նկ, ըսաւ մին։

— Ո՛չ, ըսաւ միւսը, ո՛չ թէ բաղի այլ սաղի ձայն պիտի հանէ։

Իսկ ես, խիստ խեղացի խօսք մ'ընել կարծելով, յաւելցուցի։

— Եթէ սաղի ձայն հանէ, ձեզի չազանակ կ'առնեմ։

Պէտք է ըսել որ յայնժամ տասներեք տարեկան էինք, տարիք մը որու համար մեծ

ներողամտութիւն ունենալու է, թէ եւ նա բնաւ չունենայ ուրիշներու նկատմամբ։

Երեկոյին երբ դպրոցին տնօրէնը նորէն գմեղ իւր սենեակը կանչել տուաւ, կարծեցինք թէ մեր ապագայ դասատուին առջեւ բռնած անքաղաքավար ընթացքնիս պտտեալու համար, մէկ բանի հարիւր տող լատիներէն ոտանաւոր պիտի տար մեզ ընդօրինակելու։

Ընդհակառակն գրեթէ հայրական դիտողութիւններ ըրաւ եւ խոստովանեցաւ մեզ թէ աւելի երիտասարդ դասատու մը չգտնելուն համար էր որ Պ. Շիւրճը ընտրեց էր, և թէ այս վերջինը մեծ տաղանդի տէր էր կ'ըսէին։

— Ամէն բանի մէջ, աւելցուց, ձեզ սկըզբունք ըրէք արտաքին երեւոյթին բնաւ կարեւորութիւն չտալ։

Այս խրատը բոլորովին անօգուտ էր մեզ համար, վասն զի թէ՛ մեր փափկասիրութիւնը դոհացնելու եւ թէ՛ դպրոցին հանապազօրեայ աշխատութիւններէն մեր միտքը կասեցնելու համար, մեծ ուշադրութեամբ սկսանք մարդուկին դասերուն հետամուտ ըլլալ։ Այնպիսի յարատեւութեամբ աշխատեցանք որ ամսէ մը վերջը մեր ծնողքը ըրած յառաջադիմութիւննիս տեսնելով որոշեցին մեզի մէկ մէկ իւր-իւրեք առնել։

Երեքնուս մէջ ամենէն մեծը ես ըլլալով, անդրանկութեան իրաւամբ ինձ կ'իյնար ամենէն առաջ շրթանցս մէջ զետեղել այն նուագարանին լեզուակը որ ամենուրեք ծանօթ է։ Ձայն հանելու համար փշած ժամանակս երբ այտերս հողմոց աստուծոյն այտերուն պէս կ'ուռեցնէի, այնչափ ծիծաղաւոր կերպարանք մը կ'առնէի որ ընկերներս կ'սկսէին զիս ծաղրել եւ իմ անօգուտ ձգանցս վրայ ծիծաղիլ։ Ծերունի դասատուն բնաւ խնդալու փափաք չէր յայտնէր։ Ընդհակառակն իւր դէմքը մեծ մտաւտանջութիւն կ'արտայայտէր, եւ կարծես դիւրին էր իւր աչաց մէջ կարդալ այն սարսափը զոր կ'զգար մտածելով թէ, եթէ յանկարծ դաս առնելէ դադրէինք, ի՞նչ պիտի ընէր։

Պարոն Նիւրճ մեծ խորամանկութիւն ցոյց տուաւ մեր դասերուն դադարման առաջին առնելու համար եւ ահաւասիկ ինչպէս ապացուցանելէ յետոյ թէ մեր նոր

արհեստին կատարման ժամանակ զիրար կը նեղենք միատեղ գտնուելով, որոշեց որ դասին վերացական մասին ժամանակ դարձեալ միատեղ պիտի ըլլայինք, այլ գործնական մասն ամենուս զատ զատ պիտի դասախօսուէր. սոյն պահուն միւս երկուքը գրասենեակը տանող նրբանցքին մէջ պիտի սպասէին: Սոյն նրբանցքը զբօսանաց բակին վրայ նայող պատուհանէ մը լոյս կ'առնէր. հոն էր որ կը ժողովէինք ժամը 4ին զբօսանքին մեր իրիկուան դէմի ճաշիկն ընելու համար, որ կը բաղկանար շերտ մը համեմատեցէ կամ պարզ հացով կտոր մը շոգուածէ:

Երբեմն մեր ընկերներէն ոմանք յանկարծ խաղէն հրապուրեալ պատուհանին եզերքը դնելով իրենց համեստ ուտեստը, պարտէզ կը վազէին ու յետոյ երբ խաղը կը վերջանար զայն հոն կը թողուին արհամարհանօք կամ անհոգութեամբ:

Օր մը Մօսկա գիտել տուաւ մեզ թէ համեմատեցերը որք բազմաթիւ էին դասին սկիզբը, զարմանալու չափ սակսած էին մեր դուրս ելած ժամանակ եւ յաւելցուց թէ միայն Պ. Շիւրճ կրնար զանոնք առած ըլլալ, վասն զի միայն ինքը պատուհանին կրնար մօտենալ դասի առեմ, ինչ որ յաճախ կ'ընէր աւելի լոյս առնելու պատրուակաւ:

Այս գիւտը մեծ ուրախութիւն պատճառեց մեզ եւ խօսք մէկ ըրինք մեր այս դիտողութեան ճշգրտութիւնը ստուգել: Հետեւեալ օրը համբեցինք այն ամէն համեմատեցի, խնձորի եւ շոքոլաթի կտորները որ տղայք պատուհանին առջեւ ձգեցին դասարան մտած ատեննին եւ յետոյ համբեցինք թէ յիրաւի քանի մը կտորներ աներեւոյթ եղեր էին. մի եւ նոյն ժամանակ տեսանք որ մեր դասատունը գրպանները կարի ուռեցած էին, որովհետեւ հոն պահած ըլլալու էր մեր ուտեստի մնացորդները:

Երբ դասատուն մեկնեցաւ ծածուկ ժողով մը գումարեցինք. բազուկներնիս խաչածեւ կուրծքերնուս վրայ դրած, զայրագին գլուխնիս երեքնելով որոշեցինք հասկըցնել այդ ծերուկին թէ տեղեակ էինք իւր անբաղաճ վարքին ընթացքին, եւ թէ եթէ ինք երաժշտութեան դաս կուտար մենք ալ բարեկեցութեան դաս կրնայինք տալ եւ բը-

նաւ մտադիր չէինք ներողամիտ ըլլալ իւր նկատմամբ:

Յարձակումը սկսելու հոգը ինձ վերապահած էի, ուստի հետեւեալ օրը դասատուն ներս մտածին պէս հետեւեալ խօսքերն ըսի, իբր թէ Մօսկային ուղղելով.

— Որկրամո՛ւ, երէկ համեմատեցաւ գողցար պատուհանին եզերքէն. եթէ ճակեցար, անուշներ ըլլայ, աղտեղութեանց վրայ ինկած եւ հինգ վայրկեանէն աւելի հոն մընացած էր:

— Ես չէի, այլ Նօսմանը, պատասխանեց Մօսկային, իւր գրպանները կոկո մը ծիծերուն պէս ուռած էին. իւր տեղը ես ամօթէս գետնին տակը անցայ երբ մեկնեցաւ:

— Լռեցէք, պարոններ, յարեց Նօսման, ամօթով ըլլալու էիք այդպէս բոլոր աշակերտաց անմաքուր մնացորդները լափելու եւ այդպէսով տանտիրոջ խղերուն ինկած մասը յափշտակելու:

Աչերս Պ. Շիւրճի վրայէն չէի վերցնէր. տեսայ որ գոյնգոյն կ'ըլլար, երեսը պատին դարձուցած կը ջանար իւր վրդովեալ դէմքը լայնատարած թաշկինակին տակ ծածկել:

Առանց գործին կարեւորութիւնը կանխաւ դատելու, հասկցայ որ ըրածնիս ատելի բան մ'էր. բայց արդէն չատ ուշ էր, վասն զի երբ միտքս մեղսակիցներուն յայտնեցի, չարաձմեռներն անգթաբար պատասխանեցին.

— Ի՛հ, մեղքն իր վիզը, երբ մարդ այդչափ որկրամոլ եւ անմաքուր է, գէշ չըլլար որ իւր երեսին տրուին այդ սակաւութիւնը:

Այդ վայրկեանէն սկսեալ մեր ուտեստի մնացորդները մեր ձգած տեղը կը մնային, թէ եւ մենք միշտ չարամտութեամբ զանոնք աչքի զարնելու կերպով կը շարէինք, այնպէս որ զպրոցին ծառաները զանոնք կը ժողովէին անասնոց տալու համար:

Երեք ամիս էր որ երաժշտութեան դաս կ'առնէինք եւ այնչափ զգալի յառաջադիմութիւն ըրած էինք որ կարող եւ պարտ էինք ամէնքս մէկանց նուագելու սկսիլ ասոր համար դարձեալ ամէնքս իրար եկանք ի մեծ դժբաղդութիւն իմ եւ Պ. Շիւրճի:

Օր մը երբ հեղաբարոյ ծերունին դասի

ատեն դուրս ելաւ, իւր քլառինէթը մօտէն զննելու չարագուշակ գաղափարը յղացայ: Ձեռքս առի եւ սկսայ իբր արուեստագէտ դիտել զայն: Երեսնոսի փայտէ սքանչելի գործիք մ'էր, արծաթեայ բանալիներով զարդարուած: Պ. Շիւրճ իրաւամբ հպարտ ըլլալու էր այսպիսի նուագարան մը ունենալուն, վասն զի ամէն օր մեծ խնամօք եւ զգուշութեամբ կը մաքրէր զայն: Երբ դասէն վերջը գերմանացի գործարանէ մը ելած սոյն հրաշակերտը Փանէլայի մը մէջ փաթթելով, կանաչ կաշիէ պատեանի մը մէջ կը խօթէր, ու յետոյ սոյն պատեանն ալ բոսորագոյն կաշիով աստառեալ տուփի մը մէջ կը դնէր, մարդ կը կարծէր տեսնել մին այն փոքրիկ աղջիկներէն, որք, երեկոյին երբ խաղալէ դադարին իրենց պէպէքին հետ, զայն մեծ խնամով ու անձնուիրութեամբ կը պահեցնէին:

Քլառինէթը իւր բազմաթիւ պահարաններէն դուրս հանած ժամանակ մի եւ նոյն անվերջանալի զգուշութիւնք ի գործ կը դրուէին: այն ատեն իւր խանդաղատեալ աչքերը անպատում գործվանօք լի անօր վերայ կը յառէր, մեղմիւ իրար կը կցէր անօր զանազան կտորները, մեծ զգուշութիւն քննելով նորա շողողուն փայլը չաղօտացնելու համար:

Երբ անզուսպ հետաքրքրութենէս մղեալ պատանեկաց յատուկ կոչութեամբ յափըշտակեցի զայն, բնաւ այս զգուշութիւններէն եւ ոչ մէկը միտքս եկաւ: ձեռքս առնելու ու մէջը փշելու մէկ ըրի ի մեծ նախանձ ընկերներուս, որք փորձեցին բռնութեամբ զայն ձեռքէս խլել: Ուղեցի զայն պահել քանի որ իմ ձեռքս էր, բայց անոնք կատաղութեամբ սկսան կռուիլ եւ այսպէս մէկզմէկու ձեռքէ քաջըւած ժամանակնիս թշուառ քլառինէթը գետինն ինկաւ:

Անմիջապէս ստքս վրան դրի, ապացուցանելու համար թէ իմն էր այն, թէ ես էի առաջին զայն ձեռք անցնողն եւ միանգամայն արգիլելու համար որ ընկերներս զայն խլեն երբ ես ծռէի զայն առնելու համար: յանկարծ լսուեցաւ ճարձատիւն մը որ չարաշուկ պիտի թուէր երկիւղած սրտերու եւ որ զմեզ ամբ ի բերան ու զարհուրած թողուց խորտակեալ գործիքին բեկորներուն առջեւ:

Ո՛հ, բարեկամ, կ'երեւակայես անշուշտ թէ որպիսի աճապարանօք խոյս տուինք այն պատերազմի դաշտէն որ կրնար մեզի այնչափ աղետալի ըլլալ, ու հեռացանք այն վտանգէն որ կամովին գլխունուս բերած էինք կէս մը ձախողութեամբ, կէս մը յիմարութեամբ: Մտքերնուս անգամ չանցաւ անհետացնել այն բեկորներն որք գերագոյն ամբաստանիչներ էին մեր ոճիրին եւ սոսկուով պաշարեալ սպասեցինք որ արկածն ինքնին երեւան ելլայ: Սակայն օրերը կ'անցնէին առանց մեր սպասած սոսկալի արգիւնքը յառաջ բերելու, ուստի համարձակեցանք յուսալ թէ այդ խնդիրը վերջացած էր, երբ յանկարծ տնօրէնը զմեզ կանչել տուաւ:

Արդեօք մեր վերջին ժամը հնչած էր:

Ականջնիս կախ եւ դանդաղ քայլերով, որպէս վայել է մեղադարտներու, դպրոցին բարձրագոյն դատաւորին մօտեցանք: Իւր բերնէն ելած առաջին խօսքերուն ձախտանիս պայծառացաւ: Հասկցանք որ, թէ մեր չարագործութիւնն եւ թէ մեր ունեցած չարաշուք հետեւանքն իրեն ծանօթ չէին, վասն զի տխուր դիմօք եւ բեկեալ ձայնիւ մը մեր ծեր դասատուին հիւանդ ըլլալն իմացուց մեզ:

— Պ. Շիւրճ ծանրապէս հիւանդացած է, ըսաւ, ուստի անկարելի է իրեն իւր դասերը շարունակել, եւ եթէ զինքը չըջապատող անձանց խօսքին նայինք, կարծեմ այլ եւս բնաւ զանոնք չպիտի կրնայ վերսկսիլ:

Մօրիսէի եւ Նօրմանի երեսներն երջանկութեան ծիծաղով մը լուսաւորեցան այս հանգստութեան, հանգարտութեան եւ անգործութեան ապագային առջեւ որ կը հըրապուրէր իրենց ծուլութիւնը: գալով ինձ, խղճի խայթը սիրտս կը ճմլէր, վասն զի համոզուած էի թէ այն բոլոր աղէտներն որ խեղճ երաժշտին գլխուն կ'սպառնային, իմ չարագործութեանս արգիւնքն էին:

Հետեւեալ օրն արձակուրդի օր ըլլալով, դացի հայրս գտայ ու հեծեծանօք ընդհատեալ համառօտ պատմութեամբ մը անոր պատմեցի այն աղէտն որուն գլխաւոր մեղապարտն էի:

Հրացայտ ակնարկ մը նետեց ինձ, յետոյ առանց յանդիմանութիւն մ'իսկ ուղղելու, նշան ըրաւ որ իրեն հետեւիմ: Ուղղակի

դարոց գացինք, ուսկից դռնապանին տուած տեղեկութեանց հետեւելով, դէպի բաղաքին վերին մասն ուղղեցինք քայլերնիս: Հոն ողորմելի երեւոյթ ունեցող տան մ'առջեւ կանգ առնելով ծեր կին մը հարցաքննեցինք որ դրան սեմին վրայ նստած հին գուլպաներ կը կարկտէր:

— Պարոն Շիւրճը կ'ուզեմ տեսնել, ըսաւ հայրս:

— Ամենէն վերի յարկը, գեղեցիկ պարոնս, ըսաւ պառաւը, բայց վախճամ զձեզ չճանչնայ եթէ իւր բարեկամներէն էք, վասն զի խեղճ մարդը հոգին աւանդելու մօտ է:

Գոյնս նետեց եւ սկսայ դողալ. հայրս անզգած էր:

Գործաւորուհին շարունակեց իւր ընտանի լեզուով.

— Կրնայ պարծիլ աշխարհիս թշուառութեանց եւ դառնութեանց մեծ բաժին մը կրած ըլլալուն, թէեւ երաժշտի մեծ տաղանդ ունէր, վասն զի ժամանակաւ մեծ անուն հանած է եղեր իւր երկրին մէջ, այսինքն ի Վիէննա. այնչափ երեւելի հանգիսացեր է որ Աւստրիոյ կայսրը իրեն քլառինէթ մը շնորհէր է այն ատեն: Իւր կեանքէն վեր կը բռնէր սոյն նուագարանը, կ'ըսէր, եւ յօժարակամ կը հաւատամ, վասն զի այն օրն ուր նա խորտակեցաւ չգիտեմ ինչպէս, ինքն ալ հիւանդացաւ: Ի՞նչ ընէ խեղճ մարդը, իւր հանապազօրեայ հացն էր այն: Հապա իւր աղջկը... Ի՞նչ պիտի ըլլայ իւր աղջիկը...

— Աղջիկ զաւա՞ր մ'ունի:

— Պզտի աղջիկ մը: Իւր որդւոյն աղջիկը. իւր որդւոյն որ երաժիշտ է եղեր իրեն պէս եւ որ ամէն այն տեսակ արհեստաւորաց նման անօթութենէն մեռեր է. աս ալ արհեստս ըլլայ: Ծերունին յայնժամ մանուկն իւր քովն առաւ եւ տեսնելու էր ի՞նչպէս կը խնամէր զայն ու երես կուտար: Խեղճ մարդն իւր հացէն կը զրկուէր անոր անուշեղէններ առնելու կամար: Կարծեմ այս վերջին ամիսներն իւր գործերն աղէկ կ'երթային, վասն զի ամէն իրիկուն համեմահացի եւ շոգուլթի կտորներ կը բերէր պզտիկ աղջկան: Խեղճ մանուկն ուրախութենէն անոր վիզը կը փաթթուէր եւ կը համբուրէր զնա շնորհակալ ըլլալու համար:

Աղքատաց զաւակներն ամէն օր անուշեղէն չեն ուտեր...

Աչացս առջեւէն փայլակներ կ'անցնէին. սլահ մը կարծեցի թէ թաւազլոր պիտի իյնայի:

— Հետս եկուր, ըսաւ հայրս թեւէս քաշելով:

Գարշահոտ եւ մութ սանդուղէ մը վեր ելանք, որուն իբր վանդակ կը ծառայէր աղտոտ ձեռքերու մշտնջենաւոր շփումէն եղտած ու փայլունցած հորի պարան մը, եւ ինքզինքնիս մեր ծերունի դասատուին սենեկին առջեւ գտանք: Գուռը հրեցինք եւ տեսանք զՊ. Շիւրճ, որ գձուճ խշտեակի մը վրայ պառկած էր, բայց Աստուած իմ, այն ինչ վիճակի մէջ:

Ո՛հ, այլ եւ չէր նա, այն կրակոտ ու փայլուն աչերով ծերունին: Մեռելային դեղնութիւն մը իւր երեսին կարմիրներուն յաջորդած էր. իւր ձեռաց մին անկողնէն դուրս կախուած, կարկամալ կը սեղմէր քլառինէթին բեկորներէն մին:

Չճանչեց զիս եւ զարմացմամբ տեսաւ մեր մօտենալը:

— Ո՛ւր տեղերնիդ կը ցաւի, պարոն, հարցուց հայրս:

Հիւանդը իւր ձեռքը ցուցուց ձախ ձեռքովը:

— Երթամ բժիշկ մը բերեմ, եթէ կը հաճիք, եւ կը յուսամ թէ իւր խնամքները զձեզ վերստին ի կեանս կոչեն:

Ծերունին Շիւրճ գլուխը թեթեւ մը երերցուց ու յետոյ աչքերը դէպի սենեկին մէկ անկիւնը դարձնելով, մեզ պզտի աղջիկ մը ցուցուց զոր մինչեւ այն ատեն չէինք նշմարած:

— Ես կը մեռնիմ, ըսաւ ցած ձայնիւ երկար հեծեծանք մը բռնելով, բայց նա՛, նա՛:

Եւ կամաց կամաց իւր արտեւանունքը դոցեց մինչդեռ իւր շուրթերը դեռ կը շարունակէին անհասկանալի խօսքեր մրմնջել: Վազեցի բժիշկ մը բերելու եւ երբ վերադարձայ անոր հետ:

— Ժամէ մը կը լմնայ, ըսաւ, թշուառութենէ ծիւրեալ:

Երկար եւ մեղմ հոգեվարք մ'ունեցաւ: Մինչեւ վերջին վայրկեանը սնարին մօտ կեցանք: Որչափ կ'ուզէի մեկնիլ երթալ, բայց

Հայրս իւր անողոր խստութեամբ հարկադրեց զիս ներկայ գտնուիլ այս աղիտաբեր մահուան տեսարանին, վասն զի կ'ուզէր որ իմ մատաղ երեւակայութեանս մէջ դրոշմուի:

Յանկարծ Պ. Շիւրճ ելաւ նստաւ անկողնոյն մէջ, աչերը անսովոր կերպիւր ընդլայնած, եւ իւր քլառինէթին բեկորները երկու ձեռներուն մէջ սեղմելով վերջին ճգամբ մը վաբեց. յետոյ իբր թէ այդ ըլլար իւր հոգւոյն վերջին ճիչը, ծանրապէս ինկաւ իւր բարձին վրայ, վասն զի ամենայն ինչ խորտակուած էր իւր անդգայացեալ մարմնոյն մէջ:

Հայրս նշանացի դուռը ցոյց տուաւ ինձ եւ ես խոյս տուի անիծից կայծակներուն հեղեղին տակ զոր իւր աչերը կը ցայտէին:

Կէս գիշերին հայրս տուն եկաւ. նա այլ եւս բարկացոտ դէմք մը չունէր, այլ տրտում տխուր:

— Պարոն, ըսաւ ինձ, ձեր տեղը բռնուած է պնդակառքին մէջ, հինգ ժամէն ճանբայ պիտի ելնէք: Փարիզ երթալու համար: Այս նամակն իւր հասցէին պիտի հասցընէք եւ այն ատեն պիտի իմանաք ձեր նկատմամբ ունեցած դիտաւորութիւններս:

Տասը տարի ընտանիքէս ոչ ոք տեսայ: Երբ Սէնդ - Պարպէն ելայ, ուր խնամակալ մը զիս դրած էր, նախ Գերմանիա, յետոյ Անգլիա, ու վերջապէս Միացեալ-Նահանգ շրջանին գիւ: Երբ ինձ թոյլ տրուեցաւ հօրս հետ թղթակցիլ, նա միշտ յամառ լռութիւն մը պահեց Շիւրճի փոքր աղջկան նկատմամբ, թէեւ ես միշտ ստիպողական հարցումներ կ'ընէի իրեն սոյն մասին, վասն զի կիզիչ փափաք մ'ունէի զայն ճանչելու, սիրելու եւ իրեն պաշտպանն ըլլալու:

Օր մը վերջապէս ներում չնորհուեցաւ ինձ եւ Մըլէօն վաղեցի սիրտս երկար ատեն զսպուած որդիական գորովով, յուզմամբ եւ անբաւար հետաքրքրութեամբ լի:

— Սիրելի բարեկամս, ըսաւ կենացս անաչառ տնօրէնը, մինչդեռ դուն աշխարհ կը շրջէիր, ես քու ասպազայիդ մտածեցի եւ որոշեցի զբեղ ամուսնացնել եթէ արգելք մը չունիս:

— Բնաւ չպիտի վարանիմ, սիրելի հայր իմ, վասն զի թէեւ պարագաներն եւ ար-

կածներն որք մարդոցմէ չատ աւելի զօրաւոր են եւ յաճախ անոնց գործերը կը տընօրինեն, զմեզ իրարմէ բաժնեցին ժամանակաւ, բայց գիտեմ թէ ինչ գորովով կը սիրէք ձեր որդին եւ ինչ մեծ փափաք ունիք նորա երջանկութիւնն ասպակցնելու:

— Արդէն այս ամուսնութիւնը ձեր սըրտին բաղձանաց համաձայն եւ ձեր ողջամտութեան տրամադրածին պէս պիտի ըլլայ, եթէ կը հաճիք թոյլ տալ ինձ ձեզ ներկայացնել այն անձն զոր արդէն երկար ժամանակէ ի վեր ձեզ վերապահած եմ:

— Տարակոյս չունիմ որ կատարեալ անձ մ'ըլլայ, քանի որ դուք եք զայն ընտրող:

Չեմ կրնար Նախախնամութեան դերն ընդունիլ, վասն զի նոյն ինքն Նախախնամութիւնն է որ իմ պաշտպան ձեռացս յանձնեց զնա, իմ եւ ձեր հանգստութեան համար:

Եւ զիս մինչեւ սրահին մէջտեղը հրեց ուր գտայ այն մանկամարդ օրիորդն որուն վրայ կը խօսէր պահ մ'առաջ:

— Ողջունեցէք Օրիորդ Շիւրճը:

Ահա, սիրելի բարեկամ, ինչ պարագաներու մէջ ամուսնացայ արարածոց ամենէն չքնաղին, քաղցրաբարոյին եւ բարեսրտին հետ:

Կը յուսամ քիչ ատենէն ձեզ ներկայացընել զայն, ինչպէս նաեւ փոքրիկ աղջիկս որ հինգ տարու է եւ ամէն օր ընտիր համահացներ կ'ուտէ:

ԷՏՈՒԱՐ ՄՈՆԻՒԱՆԵԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԱՆԿԻԿՆ ԱՆՄԱՅՐ

Լա՛ց, հէ՛ք մանկիկ, ձայնիւ ուժգին
Ձի կորուսիր մայրիկդ անգին:

Սեւ սեւ հողեր՝ կուլ տուին զ'այն,
Ո՛հ, նէ թողուց զ'աշխարհս ունայն:

Լա՛ց, խեղճ մանկիկ, զի դեռ հազիւ
Երկու գարուն՝ ճակատդ ազնիւ
Էին փթթած, երբ քոյ մայրիկ
Խլեց ի քէն անդուծ երկինք:

Լա՛ց, ո՛րք մանկիկ, թող աչերէդ
Շիթեր հոսին արտօսրաւէտ,
Զի չունի՛ս մայր . . . վճիռ բաղդին
է անողը եւ դառնագին :

Լա՛ց դու մա՛նկիկ, սաւայն ի գուր,
Մայրիկդ ննջէ հողին տակ լուռ . . .
Նէ չ՛կարէ լսել քոյ լաց
Եւ ոչ սրբել արցունքդ յաչաց :

Նէ չէ կարող վազել քեզ մօտ
Որպէս երբեմն ընդ առաւօտ՝
Երբ դու յօրրան ի խնդրել կաթ
Զ՛նէ կոչէիր — մայր խանդակաթ :

Նէ չէ կարող իւր թեւոց մէջ
Գրկել զքեզ յար սիրտենջ .
Եւ համբուրել քեզ հաղար գամ
Անյագարար . սէ՛ր մայրական :

Դու էիր նէրա կեանքն ու գորով,
Երջանիկ էր միայն քեզմով .
Ի քեզ եւ եթ ուշն ու ուրուշ
Կ՛անդարդառնար, մօրդ քնքոյշ :

Թէ դու մի ժամ նէրա յաչաց
Տար լինէիր, նէ խենդեցած
Քեզ որոնէր, յորժամ գտնէր
Վերայ կուրծին գգուէր սեղմէր :

Սակայն աւա՛ղ քոյդ աղետից,
Մա՛նկիկ թշուառ եւ ցաւալից,
Այժմ ողջ չէ մայրդ գթոտ,
Որ յորժամ լաս գայ քեզի մօտ :

Նէրա բիւր խնամներէն
Զիրկ մնացիր այն սեւ օրէն .
Յ՛որում թռա՛ւ յերկրէս յերկին,
Զքեզ թողլով որբ ու մեկին :

Բայց անյոյս չէս, մա՛նկիկ անգոր,
Դու Հայր մ՛ունիս, Հա՛յր երկնաւոր,
Նա գթած է եւ Որբոց Հայր,
Քեզ կ'սիրէ քան զքոյ մայր :

Ուրեմն մի՛ լար անմեղ մանկիկ,
Աստուած է քո տէրն ու մայրիկ .
Բայց մի՛ մոռնար մօրդ յիշատակ,
Պահէ մատաղ այդ սրտիդ տակ :

Եւ երբ մեծնաս, յաճախ դնա՛
Այն տեղ ուր քոյ մայր թաղուած կայ .
Թող հողակոյտն ալ պաշտելի
Լինի միշտ քեզ, մի՛շտ յարգելի :

Թող երկու շիթ ջերմ արտասուաց
Թանան զ՛հողն, եւ դու տխրած՝
Համբոյրներ տուր սեւ հողերուն,
Որք ամիսփեն մայրդ սիրուն :

Յայնժամ ոսկերք քոյ մայրիկին
Կենդանանան, եւ նէ յերկին,
Բերկրի օրհնէ լքեզ յաւէտ,
Եւ դու ապրիս երջանկաւէտ :

ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Տպագրութեան երբ հնարութիւն . — Տպագրութիւնն, այսինքն գրքի մը օրինակն արագապէս եւ դիւրագէնի բազմապատկելու արհեստն, հնարուեցաւ եւ ի գործ դրուեցաւ ժն դարուն մէջ :

Սխալ է այն կարծիք թէ այս արհեստ յառաջուց ծանօթ էր Զինաց եւ այլ ազգաց . 1450 ին, այսինքն Ամերիկայի դիւտէն (1492) 40 տարի առաջ էր որ տպագրութեան համար ձուլածոյ եւ շարժական նշանագրեր գործածելու խորհուրդն յղացուեցաւ :

Ժն դարէն յառաջ, յորում տպագրութիւնն անծանօթ էր, ձեռագիրք կը գործածուէին . մի քանի կարճ տողեր կը պարզեն ընթերցողին թէ ի՞նչպէս կը պատրաստուէին ձեռագիրք որք այնու ժամանակաւ վանքերու և հարուստներու գրադարանները կը զարդարէին :

Գրադարան, որ առն գիտութեանց հմտաւանձ մը կը լինէր, ընդ օրինակուելիք ձեռագիրն ընթերցողին կը յանձնէր :

Մագաղախագործն կակուղ եւ ողորկ մօրթ կը պատրաստէր, ոյր վրայ կը գրէր Խաչի կամ ընդ օրինակիչն :

Վայելագիրն ձեռագիրն թերթերն գեղեցիկ գունաւոր պատկերներով կը զարդարէր :

Կաշաւարբն կը համախմբէր գրքին թերթերն եւ գիրքն իւր վերջին վիճակը կ'ըստանար :

Այս բազմազան գործողութիւններէ
դիւրին է հասկնալ թէ գիրքն ո՞րքան սուղ
եւ հազուադիւտ առարկայ մ'էր ի նախնիս .
ձեռագիր մը այսօրուան դրամով 600 ֆը-
րանքէ աւելի կ'արժէր . սակայն տակաւ առ
տակաւ ընդօրինակիչը այնքան ստէպ կը
համառօտագրէին որ նոյն իսկ գիտունը
դժուարաւ կը կարդային եւ այս ձեռագրոց
մի թերութիւնն էր :

Տախտակով որպէս քրտնաբեր . — Տասն և հինգ
գերօրդ դարուն սկիզբները ուսման տեսչն
երթալով կ'ընդհանրանայ եւ ձեռագրող
բարձր գինը անյալթելի արգելք մը կը լինի
այս ընդհանուր հոսանքին , ուստի մտածե-
ցին փայտէ տախտակներու վրայ աշխար-
հագրական քարտէսներ , սրբոց պատկերներ
եւ փորագրելով լուսանցքին մէջ նոցա կարճ
բացատրութիւնները տալ . այս տախտակն
թանաքելով իւղոտ մեղանով , մագաղաթն
տակը կը դնէին , եւ յատուկ մամլով մը կը
ճնշէին : Լուսանցքին մէջի մեկնութիւններն
երթալով ընդարձակեցին , այնպէս որ այս
եղանակաւ ժե դարուն սկիզբները Ասոր-
ոսածագողն Կոստանայ անուամբ գիրք մը տըպ-
ուեցաւ :

Կ'ըսուելի թէ տպագրութեան այս նախնական եղանակն ծանօթ էր Ձինացոց Գրարէն ի վեր, սակայն և այնպէս այս քանդակեալ փայտեայ տախտակներն չենք կրնար տպագրութեան սկզբնաւորութիւն մը համարիլ, վասն զի ինչպէս որ ըսինք վերջնոյն հիմն նշանագրոց կամ տառերու շարժականութեան վրայ հիմնուած է :

Ժե դարուն առաջին կեսուն մէջ հո-
լանտացի արուեստագէտ ոմն, Լօուան Գօս-
թէր (*), մետաղէ ձուլուած շարժական նշա-
նագրերով տպագրելոյ եղանակն հնարեց
Հաարլէմի, մէջ :

Կիւրէնայերի . — Կիւրէնայերի ԼՕՈԱՆ
Գօթէրի չարժուն նշանագրերով տպագրե-
լու եղանակն կատարելագործելով գործնա-
կան վիճակի հասցուց :

Յովհաննէս Կիւթէնպէրկ ծնաւ ի Մա-

(*) Ժ. Լուան Գոսթեր ժամակոչ մ'էր ի Հասար-
լէմ, իւր թռռներուն համար իւր խաղալիկ կարծր
փայտի վրայ գրեր կը փորագրէր. օր մը դիպուածով
զանոնք մագաղաթի մէջ կը փաթթէ եւ կը նշմարե-
ր գրերն իրենց հետքը ձգած էին թռռիլին վրայ,
եւ այս առաջնորդեց զինք իւր խղիւղութիւն:

յանն (Գերմանիա) ազնուական ընտանիքէ մը . պատանեկութիւնն հայրենի կտուրին ներքեւ անցուց . իրենց տունն միջին դարու պլաբանական քանդակներով զարդարուած էր , մեծ դրան վրայ ցուլի խոշոր գլուխ մը քանդակուած էր հետեւեալ վերտառութեամբ , Ոյնէլ Դէմարթէ Էն : Սեւ ցանդան այս խորհրդաւոր խօսք պատանւոյն վրայ մեծապէս ազդած էր եւ նորա նշանաբանն եղած էր . եւ ի՞նչ կրնար դիմադրել տպագրութեան գիւտին :

Կլաթէնաբերկ հօրը մեռնելէն վերջ երկայն տարիներ ճանքորդեց եւ Հաարլէմի մէջ ծանօթացաւ Լուան Գօսթէրի շարժուն նշանագրերով տպագրելոյ գիւտին : Հաստատապէս որոշած՝ այս արհեստը կատարելագործել, գնաց Սթրազպուրկի հաստատունեցաւ ուր շարունակ տասը տարի աշխատելով մեծ բարեփոխումներ ներմուծեց Գօսթէրի հնարքին մէջ . Սթրազպուրկի մէջ երեք քաղաքացւոց ծանօթանալով ընկերացաւ նոցա հետ :

Որչափ որ կիւթէնպէրկի տասը տարուան աշխատութիւնք յաջողութեամբ պըսակուեցան, սակայն և այնպէս թերի կողմեր ունէին: Իրեն այնպիսի մետաղ մը պէտք էր որ տառերու ձեւերն ստանալու ընդունակ լինելէ զատ ձուլուելու եւս յարմար ու տոկուն լինէր. երկաթն խիստ կարծր էր եւ կը ծակէր թուղթը, իսկ կապարն մամլոյ ճնշման չէր դիմադրեր, զի շատ կակուղ էր Գալով փայտին, աւելորդ է ըսել թէ բոլորովին անյարմար էր այդ պաշտօնի. ուրեմն պէտք էր մի մետաղ կամ մետաղական խառնուրդ. որ վերոյթուեալ յատկութիւններն ի միասին ներկայացնէր:

Մեծածախ փորձերն սպառած էին կիւլթէնպէրիկ ընկերաց հարստութիւնն և կիւլթէնպէրիկ պէտք ունէր անվհատ գործիչներու իւր նպատակին հասնելու համար . քաղեքաղաքաբար իւր ընկերք մեծ կորով ցուցուցին այս ճգնաժամերուն եւ սկսան նոյն իսկ տան կահ կարասիքն վաճառելով շարունակել այն փառաւոր գործն , զի մեծ էր իրենց հաւատք տալագրութեան ապագային եւ վատահովիտն զիրենք առաջնորդող անձին : Այս երեք ընկերաց հետզհետէ մեռնիլն ստիպեց զկիւլթէնպէրիկ թողուլ Սթրազպուրիկ եւ վերստին գնաց հաստատուեցաւ

ի հայրենի քաղաքն ի Մայանս ուր յաջողեցաւ մի նոր ընկերութիւն կազմել, նոր ընկերներն էին Յովհաննէս Յօսթ եւ Պետրոս Շօֆֆէր. առաջինն հարուստ սեղանաւոր մ'էր եւ ապագայ գործին շահերն իւրացընելու ամէն կանխահոգ զգուշութիւններն ընելէ յետոյ պէտք եղած դրամն փոխ տուաւ Կիւթէնպէրկի. Պետրոս Շօֆֆէր վարպետ եւ ուսեալ ընդօրինակիչ մ'էր:

Այնպէս կը կարծուի թէ Կիւթէնպէրկ մետաղեայ շարժական նշանագրերն հնարած ատեն տակաւին չէր կրցած բուն խառնուրդը պատրաստել. Շօֆֆէրն էր որ յաջողեցաւ առաջին անգամ կապարի եւ անթիմուանի բաղադատական կշիռն գտնել. այս յարգի խառնուրդով է միայն որ նըրբածայր եւ դիմացկուն նշանագրեր կ'ըստացուի:

Գիւտն կատարելագործուած էր երբ տեսարանն եւս փոխուեցաւ. հնարիչն այլ եւս անօգուտ եւ տաղտկացուցիչ էր դարձած և վատն Յօսթ կ'ստիպէ Կիւթէնպէրկին իրեն յանձնել գիւտն, կը խլէ ձեռքէն հընոցն, մամուլն, ձուլարանն եւ տպագրութեան Հայրը կը տարագրի Մայանսէն:

Յօսթ նորա մեկնելէն յետոյ սկսաւ իւր փեսային Շօֆֆէրի հետ շահագործել տըպարանն եւ երկնչելով զի մի դուցէ տպարանին գրաշարք գաղտնիքն դուրս հանեն, զգածեալ իրենց սիրելի վարպետին մեկնելէն, Աստուածաշունչի վրայ երգում ընել տուաւ եւ ասով ալ չբաւականանալով տպարանն ստորերկեայ վայր մը փոխադրեց ուր գրաշարք ընդ կղզանաւ կ'աշխատէին: Քիչ յետոյ Յօսթ մեռաւ ժանտախտէ, եւ Շօֆֆէր ժառանգելով աշխարհիս անդրանիկ տպարանն սկսաւ շահագործել զայն, երբ քաղաքն յարձակում կրելով ի կողուպուտ մատնեցաւ եւ շփոթին մէջ մեռաւ Շօֆֆէր:

Որդին Յովհաննէս Շօֆֆէր հօրը տպարանն վերահաստատեց. սա իւր հօր ապերախտ ընթացքին չհետեւեցաւ եւ գիւտն իւրացնել չլանաց. 1808ին Մաքսիմիլիէն թագաւորին ձօնուած գրքի մը սկիզբն կը գրէր. « Մայանսի մէջ հնարագէտն Յովհաննէս Կիւթէնպէրկ հնարեց տպագրութեան գիւտն որ ապա կատարելագործեցաւ ջանիւք Յօսթի եւ Շօֆֆէրի: »

Իսկ Կիւթէնպէրկ գացած Սթրազպուրկ հաստատուած էր. իւր կենաց վերջին օրերն Մայանսի Սրբեպիսկոպոսէն շնորհներ գտաւ որ իրեն թոշակ մը սահմանեց, եւ շնորհիւ այս վեհանձն այլ անագան պաշտպանութեան բաւական ժամանակ եւս կրցաւ իւր գիւտին բարւոքման աշխատիլ:

1468 փետրուար 15 ին վախճանեցաւ:

Իւր մահուանէն յետոյ, Կիւթէնպէրկի որդիք, այսպէս կը կոչէին յայնժամ գրաշարները, գիտութեան եւ յառաջադիմութեան իբր նոր Առաքեալներ, գաջին ցրուեցան ամենուրեք, տարածեցին այն մեծ գիւտն և քիչ յետոյ ի Ֆրանսա հոյակապ տպագրատուններ հիմնուեցան:

Նոր գիւտն յաջող ընդունելութիւն մը գտաւ ժամանակակից վեհապետներէն որք մարդկութեան երախտեաց արժանացան գիտութեան լոյսը սփռող մի այսպիսի գիւտի Մեկենասներն հանդիսանալով:

Լուի ԺԱ, իւր հովանաւորութիւնն շնորհեց գերման գրաշարաց. Կարոլոս Ե տպագրութիւնն և գրավաճառութիւնն առանձնաշնորհմանց կարգը դասեց. Լուի ԺԲ վերահաստատեց այս առանձնաշնորհում եւ փառք կուտար Տիրոջ որ այսպիսի գիւտ մը իւր օրերուն վերապահուած էր. վերջապէս Ֆրանսուա Ա. իւր մէկ հրովարտակով տըպագրիչ-գրավաճառները զինուորական բոլոր ծառայողութիւններէ ազատ կը կացուցանէր:

Սակայն նորածին տպագրութեան համար եղած այս քաջալերք երկայն չտեւեցին. 1521ին տպագրեալ գրեանց համար գրաքննութիւն հաստատուեցաւ և այնուհետեւ ոչ մէկ գիրք կրնար տպուիլ առանց կանխաւ վաւերացուելու, որոյ համար տրուած խոյլաքէն առանձնաշնորհութեան մուրհակ, privilège կը կոչուէր եւ ցարդ նորա պատճէնն հին գրեանց ետեւ կը տեսնուի:

Միեւնոյն տարին արքունի հրովարտակն տպագրական հոգաբարձութիւն մը հաստատեց որոյ պաշտօնէից պարտքն էր տըպեալ գրքերու գրող ձեռնութեան և թուղթին ազնուութեան հսկել և:

1789ի յեղափոխութեան միջոցին արուեստական ընկերութեանց շնորհեալ առանձնաշնորհումնք ջնջուելով, ամէն ոք ազատ էր տպագրելու ինչպէս ամէն ոք ազատ

էր գրելու եւ խօսելու, ոակայն կայսրու-
թեան ժամանակ դրաքննութիւնն վերստին
վերցուց գլուխ և խստութիւն երեւցաւ :

Բարիպու ազգային տպարանն լուի ժոյէն
կամ լաւ եւս իւր առաջին նախարար Ռիշ-
լիէօէն հիմնուած է լուրը պալատին ստո-
րերկրեայ յարկին մէջ : 1809 ին Ռօհանի ա-
պարանը փոխադրեցաւ . այս տպարանն աշ-
խարհիս հարստագոյնն է իւր նշանագրոց
զանազանութեամբ եւ ամէն լեզուաց կա-
տարեալ հաւաքածոյիւ . տպարանն իւր կահ
եւ կազմածով այնպէս իմն կարգադրուած
է, որ հազարաւոր գործաւորներ գիւրու-
թեամբ կրնան գործել անդ, սակայն առ
հասարակ 40 ձուլիչ, 200 գրաշար, 250 տը-
պագրիչ, 20 կազմարար և 150 գծիչ, թըղ-
թածալ եւ կ'աշխատին :

Վիէննայի արքայական տպարանն եւս
մասնաւոր յիշատակութեան արժանի է,
արդի գիտութեան տպագրութեան արհես-
տին մէջ ներմուծեալ բոլոր նոր բարեո-
քումներն ի գործ ածելովն . լուսանկարու-
թեան եւ ձուլագործութեան ամենանոր
բարեորդմունք մեծ մաս կը գրաւեն այս տը-
պարանին մէջ :

1488-1580 Ալտէ ընտանիքի անդամք
Վենետիկի մէջ հռչակաւոր տպարան մը կը
բանեցնէին որ Պապերու հովանաւորու-
թիւնն կը վայելէր . Ալտէ տպարանին գոր-
ծերն այժմ ձեռագրի արժէք ունին :

Ի Ֆրանսա Տիտո կոչուած ընտանիքն
տպագրութեան յառաջացման մեծապէս նը-
պաստեց : Ֆրանսուա Ամպրուազ Տիտո, որ
1804 ին մեռաւ, նշանագրոց սրանչիւ տի-
պեր գտաւ :

Յիշենք նաեւս անգլիացի տպարանապետ
մը զանուանին Պասքըրվիլ . սա իւր տպա-
րանին գծագրիչ, փորագրիչ եւ ձուլիչն էր
միանգամայն :

ԼՈՒԻ ՖԻԿԻԷ

ՍԱՐԳԻՍ Կ. ԿԻԻՄՇԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻ			
Թիի 16.	(Մասիս Թիւ 3808)		
» 21.	» » 3814)		
» 22.	» » 3814)		
» 23.	» » 3815)		

ԽՆԴԻՐ

Թիի 24.

Եռանկեան մը երեք կողերը հաւասար են 412,
506 եւ 514 մէթրոյի : Հաշուել, ներգծեալ շրջանա-
կին շօշափման կէտերուն, սոյն կողերուն վրայ ըրած
վեց հատուածոց արժէքները :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 20

ԼՈՒԾՈՒՄՆ

Ք ըլլայ շիշերու թիւն . վճարելի գու-
մարը կը լինի Ք², եւ կ'ունենանք յետագայ
հաւասարութիւնը .

$$\text{Ք}^2 = \frac{\text{Ք}^2}{2} + 3 \text{ Ք } \text{յ'որմէ .}$$

$$\text{Ք}^2 = 6 \text{ Ք } \text{եւ}$$

$$\text{Ք} = 36$$

ՊԱՏ. — Վճարելի գումարն է 36 Փրանք :

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Պետրոսեան,	Կիրասօն
Տ. Կ. Նաւասարդեան,	Իզմիր
Ա. Ս. Թարիքեան	Ատա-Բազար
Օր. Մ. Զօհրապ,	Գատը-գիւղ
Տ. Բարսեղ Մ. Մկրտչեան,	Աշակ . Ղալա-
	թիոյ վրժրնի.
Տ. Մ. Սարրաֆեան	Աշակ. Պէրպէր.
	եան վրժրնի.
Տ. Ե. Գարսեան	» »
Անանուն	

Տ. Ն. Յակովբեանց . Դաւրէթ. — Խնդրոց մէջ գոր-
ծածուած նորահար բաւերուն քով Ֆրանսերէնը
միշտ կը դնենք ի գիւրութիւն : Չանագիւր ենք նաեւ
ըստ կարելոյն պարզ եւ գիւրահասկանալի ոճով գը-
րելու թէ՛ խնդրոց յառաջագրութիւնքն եւ թէ՛ լու-
ծումները :

ՓՈՒՔԻ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍԻ

Տ. Մ. և Բ. Ի Մաս (Ամերիկա). — Ձեր բաժա-
նորագրութեան համար, մեր սեպտ. 21 թուականի
թղթատարական քարտէսը կը յիշեցնենք որուն յ'արդ-
պատասխանն ընդունած է՛նք : Հաճեցէք անմիջապէս
պատասխանել :

Տ. Յ. Ս. Անվերս. — Նշոյնը նաեւ ձեզ համար :

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

4 Ապրիլ 1886

Օրուան խնդիրն է Երուսաղեմի դատն , որ անգրքան գշարին յուզած , գրգռած կ'երեւի հանրային զգացումն այս պահուս : Ժողովրդական ամեն դասերու խօսակցութեանց առարկայն է Կարկուր էֆէնտիի անունը , Քաղաքէրի Դրան վճիռն եւ ենթադրութիւններ յառաջիկայ վերաքննութեան երկ վրայ : Անմեկնելի է արդարեւ հանրային զգացումն . երբ դատաստանը կը տեսնուէր Շէրիի բարձրագոյն Ատենին առջեւ , երբ երկու տարբեր վճիռներ կը տրուէին տարբեր ժամանակներ , ո՛չ մէկ շարժում կը նշմարուէր , ո՛չ մէկ ոգեւորութիւն : Եւ ահա , չարաթէ մ'ի վեր զանազան Արհեստագետութիւնք և Պոլսոյ հայալատ թաղերու ազգայինք կարծես տեսակ մը բնադդուով մընալ , սկսան գունդագունդ դիմել ի Պատրիարքարան , ի Ղալաթիա , վերջապէս ո՛ւր որ կրնային գտնել Ս . Պատրիարք Հայրըն : Ամենուրեք բարձրագոյն աղաղակներով ապահովութիւն կ'ուզէին թէ խնդրոյ առարկայ եղող գետինը Ս . Յակոբայ Վանուց ձեռքէն չսլիտի խլուի : Ս . Պատրիարք Հայրը , Ժողովրդագետի մը վայել պարգութեամբ , հայրաքար յորդորեց զանոնք հանդարտ մնալ եւ սպասել որ իրաւունք եւ արդարութիւն յերեւան գտն շնորհիւ արդարադատութեան Վեհ . Սուրբանի կառավարութեան : Հանրային մտահոգութիւնն մէկ կողմէ կ'աւելնայ սակայն եւ կ'ըսուի իսկ թէ ի մօտոյ « հսկայ ցոյց մը » պիտի լինի Մայր Եկեղեցւոյ մէջ : Ոստիկանութեան նախարարն ամեն ինչ տեղեկագրել կուտայ բարձրագոյն իշխանութեան և երկու օր առաջ երկար տեսակցութիւն մը ունեցաւ Ս . Պատրիարք Հօր հետ : Ն . Ամենապատուութիւն այցելեց նաեւ Արտաքին գործոց , Կրթական նախարարներուն եւ այլ բարձրաստիճան պետական անձանց . բոլոր այս բանակցութեանց առարկայն է Կարկուրեան դատն զոր վերջին անգամ

բարձրագոյն ատենի մը հանելէ առաջ , Ս . Պատրիարքն գովելի եռանդեամբ մը կը ջանայ գործոյն անցեալ եւ ներկայ բոլոր մանրամասնութիւնները ծանօթացնել Բ . Դրան :

Գաւառներէն չունինք նոր լուր մը յիշատակութեան արժանի . այլ մեր գաւառաբնակ ազգայնոց գոհութեամբ կրնանք հաղորդել կեդրոնին մէջ եղած նոր ձեռնարկ մը որ մեծ շահեկանութիւն ունի անոնց համար , երկրագործական եւ առեւտրական տեսակէտով :

Գատական նախարար Սէրվէր փաշայի նախագահութեամբ Յանձնաժողով մը կազմուած էր այս օրերս , ներքին արուեստից Յուցահանդէս մը կազմակերպելու համար : Արդ , Ն . Վսեմութիւն գիր մ'ուղղելով ի Պատրիարքարան , խնդրեց որ Կարնոյ , Վանայ , Մշոյ եւ Բաղիշոյ վաճառականներէն մէկ մէկ ազգայինք ներկայանան իրեն : Ըստ այս բարձր հրաւերին , զորս հայ վաճառականք ներկայացան Սէրվէր փաշային որ պատուասիրելով զանոնք , ծանոյց թէ « Վեհ Սուրբանը կը փափագի զարգացած տեսնել իրենց գաւառաց արհեստներն ու վաճառականութիւնն , և կառավարութիւնն ալ կը խորհի միջոցներ ձեռք առնուլ այս նպատակաւ » : Ն . Վսեմութիւն տեղեկութիւն խնդրեց իրենց գաւառաց բնիկ արհեստներուն եւ բերքերուն վրայ եւ հարցուց թէ ինչպիսի միջոցներ էական կը համարուին նոր մշում մը տալու համար այս արհեստներու եւ բերքերու : Սէրվէր փաշա կարգաւ իւրաքանչիւրին տեղեկութիւնները լսելէ յետոյ , յանձնարարեց որ յիշեալ գաւառաց նիւթական զարգացման միջոցները մեկնող Տեղեկագիր մը պատրաստուի որոյ խմբագրութիւնն յանձնուեցաւ Վանայ պատուիրակ Նաթանեան Կարապետ էֆէնտիին :

S . Ա .

Արտօնատէր Կ . Ս . ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԻՐԱԳՐՈՅ